Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

783
U-20

783
15-20

2013
FF 2008

# ՄԱՂԹԱՆՔ

## ՎԱՍՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ԵՒ ՀԱՅՐԱՊԵՏԻ

## ԱԶԳԻՍ



1914—ՌՅԿԳ

ԷԼԵԿՏՐԱՇԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

*ՀՐԱՄԱՆԱՒ*

# Տ. Տ. ԳԷՈՐԳ Ե.

## ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

367-2008

# ՀՐԱՀԱՆԳ

*Ա. Հայրապետական մաղթանք կատարի յամենայն եկեղեցիս Հայոց, յորս յիշատակի անուն Ծայրագոյն Պատրիարքի և Կաթուղիկոսի Ամենայն Հայոց։*

*Բ. Մաղթանքն կատարին ա. ի տարեմուտ (ի 1-ն Յունուարի) զկնի Ս. պատարագի, բ. ի տօնի Ս. Էջմիածնի, զկնի Ս. պատարագի. գ. ի տարեդարձի Ս. Օծման և յաւուր Անուանակոչութեան Սրբազնագոյն Հայրապետի Ազգիս, զկնի Ս. պատարագի. դ. Նաև յարտակարգ դէպս, ըստ տնօրէնութեան Հոգևոր Բարձր Իշխանութեան։*

*Գ. Վասն կատարելոյ զմաղթանս՝ միաբանք (հոգևորականք) զգեցցին շուրջառս և եկեսցեն յատեան խաչիւ և աւետարանաւ, մոմեղինօք և ամենայն զարդուք։*

*Հանդիսադիր պատարագիչ Եպիսկոպոսն կամ երիցագոյնն ի հոգևորականաց ընթեռնու զաղօթս։*

*Դ. Եթէ մաղթանքն կատարին նախ քան զՍ. պատարագն, պարտ է ասել զՏէրունական աղօթս «Հայր մեր». իսկ եթէ զկնի Ս. պատարագի, յետ «Կատարումն օրինաց և մարգարէից»... ըստ կարգի մաղթանացս։*

*Յորժամ դպիրք երգեն զ«Հրաշափառ» շարականն, Հանդիսադիրն խնկարկէ և լինի զանգահարութիւն։*

# ԿԱՐԳ

## Հայրապետական մաղթանաց.

Սարկաւագն. *Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք. ընկալ կեցո և ողորմեա։*

Հանդիսադիրն. *Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։*

Շարական Դ Զ:

Դպ. Ա. *Հրա շա փա ռ | Աս տը ուած, և միշտ բա րե-*
*խնա մո ղ, որ յա ռա ջ գի տու Թեամբ ըղ փըր կու Թիւն*
*հա յա ստան եա յց ըս կը զը նա ւոր եալ է պա ը-*
*Թե ւա կան մե զա պարտ ա գ գէն լու սա ւո րիչ մե զ*
*շնոր հե ցե ր. վասն ո րոյ բա րե խօ սու Թեամբ սո-*
*րա փըր կի չ կե ցո ը զ մեզ ա յժմ և*
*ի քո յա հա ւո ր զա լըս տեա նդ։*

Բ. *Հրա շա լի զար մաց մամբ ե րա նե լի ն սուրբ*
*Գրի գոր զան սա նե լի ըզ չար չա րանս ի յա նձն*
*է ա ռ և ե րեք հըն գօք ա մօք ի մէջ Թու նա ւո-*
*րա ցըն ընա կէ ը ա ն դըն զա յլն սան ջա նօք*
*ի վի րա պի ն։*

Գ. *Հրա շա գո րծ քո բա նիւդ և մեծ ո զօր մու-*
*Թեա մբ ե լ եա լ ըը ժըշ կէր ըզ հար ուած եալսն ի*
*դի ւա բաղխ սաս տի ցն ե ը կըր պա զուս առ-*
*նե լով զա մե նե ս եան սուրբ Ն ը բոր զու Թեա նդ։*

*Թա գա ւոր ե րկ նա ւոր զե կե զե ցի քո*
*ան շա րժ պա հ եա և զե ը կըր պա զուս ան ուա նըդ*
*քում պահ եա ի խա ղա ղու -*
*Թեա ն։*

Քահանայն. Սաղմոս կցորդ ՃԱ., *Ալէլուիա ալէլուիա. Դու յարուցեալ գԹասցիս ի վերայ Սիոնի, ժամանակ գԹալոյ նորա հասեալ է ժամ։*

*Պօղոսի առաքելոյն յեբրայեցւոց ԹղԹոյն է ընԹերցուածս։*
*(ԺԳ. 17 և 20–21)։*

*Ունկնդիր լերուք առաջնորդաց ձերոց, և հպատակ կացէք նոցա, զի նոքա տքնին վասն ոգւոց ձերոց, որպէս Թէ համարս տալոց իցեն ընդ ձեր. զի խնդուԹեամբ արասցեն զայն և մի յոգւոց հանելով, զի այն ոչ յօգուտ ձեր է։ Եւ Աստուած խաղաղուԹեան որ եհան ի մեռելոց զհովիւն հօտից, զմեծն արեամբ յաւիտենական ուխտին, զՏէր մեր Յիսուս, հաստատեսցէ զձեզ ի գործս բարուԹեան առնել զկամս նորա, և արասցէ ի մեզ զհաճոյսն առաջի իւր ի ձեռն Յիսուսի Քրիստոսի, որում փառք յաւիտեանս. ամէն։*

Դպիրքն. Սաղմոս (ՃԹ) ի ձայն՝ Ալէլուիա, ալէլուիա. Երդուաւ Տէր՝ և ոչ զղջասցի. թէ դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի. եՏէր ընդ աջմէ քումմէ։

Քահանայն. Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Յովհաննու։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Ես եմ հովիւն քաջ. հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց։ Իսկ վարձկանն որ ոչ է հովիւ, որոյ ոչ իւր են ոչխարքն, իբրև տեսանէ զգայլն զի գայ, թողու զոչխարսն և փախչի. և գայլն յափշտակէ զնոսա և ցրուէ. քանզի վարձկան է, և չէ փոյթ նմա վասն ոչխարացն։ Ես եմ հովիւն քաջ, և ճանաչեմ զիմսն և ճանաչիմ յիմոցն։ Որպէս գիտէ զիս Հայր, գիտեմ և ես զՀայր. և զանձն իմ դնեմ ի վերայ ոչխարաց։ Նա և այլ ևս ոչխարք են իմ որ ոչ են յայսմ գաւթէ, և զայնս ևս պարտ է ինձ ածել այսր, և ձայնի իմում լուիցեն, և եղիցին մի հօտ և մի հովիւ։

### Մաղթանք։

Քահանայն. կամ Սարկաւագն ի ձայն՝ Բարեխօսութեամբ սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի և ամենայն սրբոց տացէ Տէր Աստուած աշխարհաց խաղաղութիւն։

Դպիրքն. Ծանր. Ա մէն։

Աստուածակառոյց և անյաղթելի մեծի Աթոռոյս անշարժութիւն և անսասանութիւն։

Դպ. Ամէն։

Եւ եկեղեցեացս ուղղափառաց հաստատութիւն։

Դպ. Ամէն։

Մեծի Հայրապետին մերոյ Տեառն Տեառն (այս անուն) Սրբազնագոյն կաթուղիկոսի ամենայն Հայոց յամերամ ժամանակօք ապահով անդորրութիւն։

Դպ. Ամէն։

Եւ մեզ համագումար ժողովելոցս ըստ իւրաքանչիւր կարգի և աստիճանի սէր և միաբանութիւն։

Դպ. Ամէն։

Դպ. Երգեն. Հո գիդՍստ ուա ծ ա դ բի ւր շնո ր-

հաց ա ուա աա բաշխ և մի շո գը -



թած ըղ մայրս մե ր պա յ ծա ռա ցո,

զման կու նս ռո ըին քե զօ րա ցո,

ըղ Հա յ րա պե տըս մե ր կե ցո և

ի շնո ր հըս քո փա յ լե ցո, ի

փա ռըս սու րբ Ե ր րո ր դու թեան այժմ

ե ւ յա ւէտ և յա ւի տ-

եա ն։

### ԳՈՀԱԲԱՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ

Յաւուրս Հայրապետական տօնից:

Հանդիսադիրն ընթեռնու.

Տէր Աստուած մեր, բարերար և բազումողորմ, Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, բարեխօսութեամբ սրբոց առաքելոցն Բարթուղիմէոսի և Թադէոսի, որք լուսաւորեցին զՀայաստան աշխարհս ի հեթանոսական խաւարային վիցապաշտութեանց և սրբոյն Գրիգորի առաքելաշաւիղ լուսաւորչին, ընկալ զաղաչանս ժողովրդեան Քո և զՏէր (այս անուն) Սրբազնագոյն կաթուղիկոսն մեր, զոր ընտրեցեր ի հայրապետութիւն և յառաջնորդութիւն ազգիս Հայոց, հաստատուն և անսասան պահեա ի մեծի կոչմանս ընդ երկայն աւուրս. Տուր Սմա առաջնորդել հեզութեամբ և ուղղափառ վարդապետութեամբ ժողովրդեան Քում, բարձրացո ի մէջ տիեզերաց զեղջիւր օծելոյ Քո, արժանաւորեա լինել հաւատարիմ և իմաստուն տնտես նորոյ ուխտի Քո։ Հայեաց քաղցրութեամբ ի ժողովուրդս Քո, որ հաւատացաւ Սմա, և պահեա անարատ յամենայն չարէ, զի մերժեալ յանձանց զաշխարհական ցանկութիւնս՝ կեցցեն արդարութեան՝ զգեցեալք զսրբութիւն Քրիստոսի Քո, և եղիցին մի հօտ և մի հովիւ՝ ի միասին արժանաւորել յաւիտենական ուրախութեանցն հասանել ընդ ամենայն սուրբս Քո. շնորհօք Միածնի Քո Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում քեզ Հօր ամենակալի, և համագոյ սուրբ Հոգւոյդ վայել է փառք, իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

### Իսկ ի տօնի Ս. Էջմիածնի.

**Հանդիսադիրն ընթեռնու.**

*Տէր մեր և Փրկիչ Յիսուս Քրիստոս, որ աղօթիւք և միջնորդութեամբ բազմաչարչար վկային քո և հօրն մերոյ սրբոյն Գրիգորի լուսաւորչին, մեծաւ փառօք և բազմութեամբ զօրացդ լուսեղինաց իջեր յերկնից ի դաշտն Արարատեան, ի յայցելութիւն փոքու հօտիդ քոյ ազգիս Հայոց՝ և ի ցուցումն յատկականի սիրոյդ և մեծի ողորմութեանդ. և ոսկէսւամբ բաղխեցեր՝ զխորս անդնդոց, և հալածեցեր ըզգունդս սանդարամետականաց. ուր և լուսաձև յօրինմամբ հրաշակերտեցեր զՄայր Աթոռն մեր զսուրբ Էջմիածին. և արարեր զնա շտեմարան անսպառելի շնորհացդ աստուածայնոց՝ ի լինել ծնող՝ դաստիարակ և կատարելագործիչ ամենայն եկեղեցեացս Հայաստանեայց. արդ՝ պահեա զնա անսասան, հաստատուն և անաղօտ, ի պայծառազարդութիւն եկեղեցեացս մերոց և մանկանցս սոցին մինչև ի կատարած աշխարհի. յորոց միշտ փառաւորի ամենասուրբ անուն քո յաւիտեանս յաւիտենից. ամէն։*

**Շարական Դկ.**






### Անդաստան:

Դպիրքն ի՛ ձայն՝ *Ամէն. ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա։*

**Միաբանք.**

*Օրհնեսցի և պահպանեսցի և նախախնամեալ պահեսցի Հայրապետութիւն Հայոց. այս նշանաւ սուրբ խաչիս և սուրբ աւետարանաւս և ամենայն շնորհիւ. անուամբ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։ Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։ (Երիցս կրկնել)։*

Եւ ապա. *Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։*

### Քարոզ:

Սարկաւագն. *Սուրբ խաչիւս աղաչեսցուք զՏէր զի սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց. և կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ։ Ամենակալ Տէր Աստուած մեր կեցո և ողորմեա։*

### Աղօթք.

**Հանդիսադիրն.**

*Պահպանեա զմեզ Քրիստոս Աստուած մեր ընդ հովանեաւ սուրբ և պատուական խաչի քո ի խաղաղութեան. փրկեա յերևելի և յաներևոյթ թշնամւոյն։ Արժանաւորեա գոհութեամբ փառաւորել ըզքեզ ընդ Հօր և ընդ սրբոյ Հոգւոյդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։*

**Դպիրքն երգեն—Զփր.**






**Սարկաւագն.**

*Օրհնեցից զՏէր յամենայն ժամ. յամենայն ժամ օրհնութիւն նորա ի բերան իմ։*

**Հանդիսադիրն.**

*Օրհնեալ եղերուք ի շնորհաց Սուրբ Հոգւոյն, երթայք խաղաղութեամբ, և Տէր Յիսուս եղիցի ընդ ձեզ և ընդ ամենեսեանդ. ամէն։*

28798

ՀՀ Ազգային գրադարան
NL0497902